ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար մուտքի հսկողության համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/50» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» նոյեմբերի, 2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Մելքոնյան (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/50» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2018թ.-ի նոյեմբերի 26-ին, ժամը 12:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
Մուտքի հսկողության համակարգ	*3 723 600*

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Էլեկտրոնային փոստի հասցեն
«Էյիհաս Ջի Էլ» ՍՊԸ	el@sec.am

«Էյչ Գրուպ» ՍՊԸ	Khv_84@mail.ru
«ՌՎ Պռոջեկտս» ՍՊԸ	rvprojects7@gmail.com

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Էլլիպս Ջի Էյ», «Էյչ Գրուպ» և «ՌՎ Պռոջեկտս» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«Էլլիպս Ջի Էյ», «Էյչ Գրուպ» և «ՌՎ Պռոջեկտս» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. <u>Մասնակիցների առաջարկած գները՝</u>

Ապրանքի անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
	«Էյչ Գրուպ» ՍՊԸ		
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	3	4	5
Մուտքի հսկողության համակարգ	2 750 000	550 000	3 300 000

Ապրանքի անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
	«ՌՎ Պռոջեկտս» ՍՊԸ		
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	3	4	5
Մուտքի հսկողության համակարգ	3 470 000	-	3 470 000

Ապրանքի անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
	«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ		
	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	3	4	5
Մուտքի հսկողության համակարգ	3 166 000	633 200	3 799 200

7.Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

-Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ -ին,

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ***2018թ. նոյեմբերի 29-ը*** ներառյալ. ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, (հրավերի II մասի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը):

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 30-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ավագյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Մելքոնյան

(ստորագրություն)

Կ. Մելքոնյան

(ստորագրություն)

Էլլադա Արզաքանյան

(ստորագրություն)

Լ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Օ. Ասատրյան

(ստորագրություն)